

Ժամացույց

Աշտարակի ժամացույցի զանգերը խփում են յուրաքանչյուր կես ժամը մեկ: Ընդ որում յուրաքանչյուր ժամի սկզբին զանգերը խփում են այդ ժամին հավասար քանակով (ժամը 1-ին մեկ անգամ, 2-ին երկու անգամ, ..., կեսօրին և կեսգիշերին՝ 12 անգամ): Իսկ յուրաքանչյուր ժամի կեսին զանգերը խփում են մեկ անգամ:

Գրել ծրագիր, որը հաշվում է, թե տրված ժամանակահատվածում աշտարակի ժամացույցի զանգերը քանի անգամ են զնգում:

Մուտքը

Առաջին տողում տրված են t_1 , m_1 ամբողջ թվերը, երկրորդ տողում t_2 , m_2 ամբողջ թվերը: ($0 \leq t_1, t_2 \leq 23$; $0 \leq m_1, m_2 \leq 59$): Առաջին թվազույգը ցույց է տալիս տրված ժամանակահատվածի սկիզբը՝ ժամը և րոպեն, երկրորդ թվազույգը ցույց է տալիս ժամանակահատվածի ավարտը: Ժամանակահատվածի տևողությունը 24 ժամից փոքր է:

Ելքը

Արտածել տրված ժամանակահատվածում (ներառյալ ծայրակետերը) հնչած զանգերի քանակը:

Օրինակներ

Մուտքը.

9 20

10 15

Ելքը.

11

Մուտքը.

22 30

0 5

Ելքը.

25